ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

# ՀՐԱՄԱՆ

Թիվ 25-Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշման հավելվածի 20-րդ կետի 8-րդ և 13-րդ ենթակետերի՝

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկային ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԳՆԴԱՊԵՏ** **Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

«20» 07 2020թ.

քաղ. Երևան

Հավելված

ՀՀ ոստիկանության պետի

«20» 07 2020թ.

թիվ 25-Լ հրամանի

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկային ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) կենտրոնական ապարատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է (վարչության իրավունքով):

2. Ծառայությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքներով, այլ օրենքներով, սույն կանոնադրությամբ, Ոստիկանության պետի հրամաններով և այլ իրավական ակտերով:

3. Ծառայությունը ստեղծվում, և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Ծառայության աշխատակիցների իրավունքները և պարտականությունները սահմանվում են «Ոստիկանության մասին» օրենքով,

ինչպես նաև Ոստիկանության պետի կողմից հաստատված տվյալ պաշտոնի անձնագրով:

5. Ծառայության անվանումն է՝

1) հայերեն՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկային ծառայություն,

2) ռուսերեն՝ Патрульная служба полиции Республики Армения,

3) անգլերեն՝ Patrol Service of the Police of the Republic of Armenia,

4) ֆրանսերեն՝ Service de Patrouille de la Police de la République d'Arménie:

6. Ծառայությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն և օտար լեզուներով անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր: Ծառայությունը կարող է ունենալ խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

7. Ծառայության աշխատակիցները Ոստիկանության ծառայողներ, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք են:

8. Ծառայության տեղակայման վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մովսես Խորենացի 158:

## II. ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Ծառայության նպատակներն են՝

1) հասարակական կարգի պահպանության, հանցագործությունների և վարչական իրավախախտումների կանխման, խափանման և բացահայտման արդյունավետության բարձրացումը, ճանապարհային երթևեկության անվտանգության, տրանսպորտային միջոցների շահագործման և հասարակական կարգի պահպանման որակի բարձրացումը,

2) Ոստիկանությունում ստացված կանչերին, ահազանգերին և հաղորդումներին (այսուհետ՝ Ահազանգ) հնարավորինս սեղմ ժամկետում արդյունավետ և արագ արձագանքումը,

3) հանցավորության մակարդակի նվազումը,

4) ճանապարհատրանսպորտային պատահարների նվազումը,

5) միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան արտաքին ծառայության իրականացումը,

6) Ոստիկանության նկատմամբ հասարակության վստահության բարձրացումը:

10. Ծառայության խնդիրներն են՝

1) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության ապահովումը,

2) հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը, խափանումը, ինչպես նաև հայտնաբերումը և բացահայտումը,

3) իրավախախտումների դեմ տարվող պայքարում հասարակության մասնակցության մակարդակի բարձրացումը՝ հասարակության հետ շարունակական տարվող աշխատանքների միջոցով,

4) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը,

5) մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը,

6) սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանությունը,

7) քննչական և դատավարական գործողությունների կատարման անվտանգության ապահովումը և դրանց կատարմանն աջակցությունը,

8) դժվարին իրավիճակում հայտնված անձանց օգնության և աջակցության ցուցաբերումը:

## III. ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

11. Ծառայությունը կազմված է վարչակազմից, վերջինիս ենթակառուցվածքային ստորաբաժանումներից, ինչպես նաև Ծառայության անմիջական ենթակայության ստորաբաժանումներից:

12. Ծառայության անմիջական ենթակայության ստորաբաժանումը Երևան քաղաքի գունդն է, որը բաղկացած է շարային ստորաբաժանումներից (գումարտակ, վաշտ, դասակ և այլն), ինչպես նաև ՃՏՊ գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման, վարչական գործունեության, հերթապահ ծառայության բաժանմունքներից և հետախուզման հատուկ խմբից:

13. Ծառայության վարչակազմի ենթակառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) պարեկային ծառայության կազմակերպման բաժինը,

2) մոնիթորինգի և վերլուծության բաժինը, որը բաղկացած է մոնիթորինգի, վերլուծության և ծառայողական քննությունների իրականացման բաժանմունքներից,

3) կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժանմունքը,

4) տնտեսական բաժանմունքը,

5) քարտուղարությունը:

## IV. ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԸՍՏ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

14. Երևան քաղաքի վարչատարածքային սահմաններում Երևան քաղաքի գնդի գործառույթներն են՝

1) հանցագործությունների մասին հաղորդումների ընդունումը,

2) իրավախախտումների ու պատահարների մասին Ահազանգերին օպերատիվ արձագանքումը,

3) դեպքի վայրի պահպանությունը և ականատես վկաների հայտնաբերումը,

4) հանցագործությունների և այլ իրավախախտումների հետևանքով անձանց կյանքի և առողջության համար վտանգ հանդիսացող գործոնների չեզոքացումը և վերացումը,

5) տուժողներին անհապաղ օգնության հասնելը, տուժած անձանց անհետաձգելի առաջին բժշկական և հոգեբանական օգնության ցուցաբերումը,

6) բնակչությանն անհետաձգելի օգնություն ցուցաբերող ծառայություններին աջակցելը,

7) իրավախախտում կատարած անձանց արգելանքի վերցնելը, նրանց հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող մարմնի վարչական տարածք տեղափոխելը,

8) հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում անձի ձերբակալումը և անձնական խուզարկության կատարումը,

9) հետախուզվող և անհետ կորած անձանց, ինչպես նաև հետախուզվող տրանսպորտային միջոցների հայտնաբերումը,

10) դեպքի վայրում քննչական և դատավարական գործողությունների կատարման ընթացքում վարույթն իրականացնող մարմիններին աջակցությունը, դրանց կատարմանը խոչընդոտող հանգամանքների վերացումը և, ըստ անհրաժեշտության, դատավարական գործողություններին մասնակցող անձանց անվտանգության ապահովումը,

11) զանգվածային միջոցառումները սպասարկող ոստիկանական և այլ ուժերին աջակցությունը,